

ՀԱՂՈՐԴՈՒՄ՝

ԲԱՆԱՄԱՐՏ

«Ժողովրդավարությունը պետք է կառուցվի **տեղեկատվություն կիսող բաց հասարակությունների** միջոցով: Երբ կա տեղեկատվություն՝ կա լուսավորություն: Երբ **կա բանավեճ՝ կան լուծումներ**: Երբ չկա իշխանության բաշխում, չկա օրենքի գերակայություն, չկա հաշվետվողականություն՝ կա չարաշահում, կոռուպցիա, հպատակեցում և վրդովմունք»:

— Ատիֆետե Յահյագա

Երբ մեր կյանքին առնչվող բարդ թեմաներին մոտենում ենք **բաց մտքով և քննարկելու պատրաստակամությամբ՝** շահում ենք բոլորս:

Հին Հունաստանից մինչև ԱՄՆ նախագահական ընտրություններ՝ բանավեճերը գործիք են եղել **ճշմարտությունը** գտնելու, **ժողովրդավարություն** հաստատելու, լավագույն **որոշումները** կայացնելու, արդյունավետ **կրթության**, մտքի **զարգացման** համար:

ԲԱՆԱՄԱՐՏ

Բանամարտը հաղորդում է, որի ընթացքում տարբեր համալսարանների ուսանողներ **առաջատար մասնագետների ուղեկցությամբ** անցնում են **բանավեճի արվեստի դասընթացներ**՝ պատրաստվելով վճռական բանավեճի, որտեղ կպայքարեն **լավագույն բանավիճող համալսարանի** տիտղոսի համար:

Ի՞նչ կտա Բանամարտը ձեզ

Լավագույն մասնագետների օգնությամբ կզարգացնեք՝

- Վերլուծական/ քննադատական մտածողություն
- Հռետորություն
- Փաստարկման և համոզման տեխնիկաներ
- Հանրային խոսք
- Թիմային աշխատանք
- Ինքնավստահություն
- Ակտիվ լսելու կարողություն
- Հետազոտական հմտություններ

Ի՞նչ կտա Բանամարտը բոլորիս

Կզարգացնի **քաղաքացիական պատասխանատվության զգացում** և կդրդի դիրքորոշում ունենալ կարևոր հարցերում:

Կսովորեցնի **խնդրին նայել բոլոր կողմերից**, լսել և հասկանալ հակառակ կարծիքները, լինել ավելի հանդուրժող:

Կապահովի հարթակ, որտեղ հանրությունը կարող է ականատես լինել ժամանակակից **երիտասարդության կարողություններին և մտածողությանը**:



ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԵԿ ԵԹԵՐԱՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ 4 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ:

1 2 3 4

3 ՓՈՒԼ

Փուլ 1

Ուսանողների ընտրություն

Փուլ 2

Դասընթացներ

Բանամարտեր

Փուլ 3

Եզրափակիչ բանամարտ

~30 ԷՊԻԶՈԴ

1 էպիզոդ

20-26 էպիզոդ

2-3 էպիզոդ

ՓՈՒԼ 1

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ



ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Առաջին փուլում չորս համալսարաններից հավաքագրվում են հետաքրքրված ուսանողները: Թեստավորման և հարցազրույցների արդյունքում յուրաքանչյուր համալսարանից ընտրվում է 10 ուսանող:

ՓՈՒԼ 2

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ԲԱՆԱՄԱՐՏԵՐ



Երկրորդ փուլը բաղկացած է **դասընթացներից** և **բանամարտերից**: Յուրաքանչյուր ամսվա սկզբում ընտրվում է այդ ամսվա բանավեճի թեման: ՈՒսանողներն անցնում են դասընթացներ, ապա մասնակցում բանավեճի, որից ստանում են բալեր: Բոլոր բանավեճերից հետո եզրափակիչ բանամարտի փուլ են անցնում ամենաշատ բալերը հավաքած երկու համալսարանները:

ՓՈՒԼ 3

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԲԱՆԱՄԱՐՏ

(ԲԱՆԱՄԱՐՏ)

ՀԱ1 ՀԱ2

1 ԷՊԻԶՈԴ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

2-3 ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՕՐ

1 ԷՊԻԶՈԴ

Երկու ընտրված թիմերն անցնում են վերջին դասընթացները և մասնակցում **եզրափակիչ բանամարտին**: Հաղթող թիմը ստանում է գլխավոր մրցանակը և լավագույն բանավիճող համալսարանի տիտղոսը:

(ԲԱՆԱՄԱՐՏ)
ՀՈՌ

Նախագծով հետաքրքրված ուսանողները կարող են սկանավորել QR կոդը՝ Տելեգրամ ալիքին միանալու, մանրամասներին ծանոթանալու և գրանցվելու համար: